ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

№ 5/01.2/4667

«_____» «_____» 2021 թ.

Լոռու մարզի
Ախթալա համայնքի ղեկավար
պարոն Ա. Թամազյանին

Հարգելի պարոն Թամազյան

Ի պատասխան Ձեր 2021 թվականի մարտի 22-ի N 188/05 գրության՝ ներկայացնում եմ սուբվենցիայի տրամադրման ստորագրված և կնքված №ՇՄՆ-ՍՎ-3 պայմանագրի Ձեր օրինակը:

Առդիր՝ 1 նիշք:

Հարգանքով՝

Գ. Գույլան

Ռազմավարական քաղաքականության վարչություն
Արթուր Ղավալյան, հեռ. 011 818 515

ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ №ՇՄՆ-ՍՎ-3

ք.Երևան «29» «Մարտի» 2021թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Գ.Գուլյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Նվիրաբերող», մի կողմից և Ախթալայի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Ա. Թամազյանի, ով գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Նվիրաբերություն ստացող», մյուս կողմից, այսուհետ միասին՝ Կողմեր, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի «բ» կետով և «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի Հավելված 7-ով, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳԻՆԸ

1.1. Պայմանագրով Նվիրաբերողը Նվիրաբերություն ստացողին է հատկացնում «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքի համաձայն Ախթալա համայնքի 2021 թվականի բնապահպանական ծրագրի միջոցառումների ֆինանսավորման նպատակով Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելվածով՝ ծրագրի իրականացման միջոցառումներով, Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեով նախատեսված **3848600 (երեք միլիոն ութ հարյուր քառասունութ հազար վեց հարյուր)** դրամ կապիտալ սուբվենցիայի գումարը:

2. ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

2.1. Պայմանագրի համաձայն Նվիրաբերողը փոխանցումները Նվիրաբերություն ստացողին կատարում է հաշվետու եռամսյակի՝

ա) առաջին և երկրորդ ամսվա համար բյուջետային ծախսերի նախահաշվով տվյալ եռամսյակի համար նախատեսված ֆինանսավորման գումարի 1/3 մասի չափով,

բ) երրորդ ամսվա համար՝ հաշվետու եռամսյակի արդյունքներով ներկայացված սուբվենցիայի հերթական մասնաբաժնի ստացման համար համայնքից պահանջվող փաստաթղթերով (համայնքի և մատակարարի, կապալառուի, ծառայություն մատուցողի միջև կնքված պայմանագրից քաղվածք, հանձնման-ընդունման արձանագրություն, կատարողական ակտ, հաշիվ-ապրանքագիր և/կամ այլ հիմնավորող փաստաթղթեր, այսուհետ՝ պահանջվող փաստաթղթեր) վճարման ընդունված ֆինանսական պարտավորությունների մեծության (հաշվարկված տարվա սկզբից աճողական կարգով) և հաշվետու եռամսյակի առաջին ու երկրորդ ամսվա համար փաստացի վճարված կանխավճարների, ինչպես նաև տարվա սկզբից վճարման ընդունված ֆինանսական պարտավորությունների դիմաց կատարված փոխանցումների հանրագումարի դրական տարբերության չափով:

2.2. Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի №2215-Ն որոշման Հավելված 5-ի 10-րդ աղյուսակին համապատասխան:

2.3. Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հաշվետու եռամսյակի՝

ա) առաջին և երկրորդ ամսվա համար՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10-ը՝ կանխավճարի տեսքով,

բ) երրորդ ամսվա համար՝ Նվիրաբերություն ստացողի կողմից մինչև հաշվետու եռամսյակի վերջին ամսվա 25-ը (4-րդ եռամսյակի համար մինչև՝ դեկտեմբերի 20-ը) Նվիրաբերողին ներկայացված Պայմանագրի 2.1 կետում նշված պահանջվող փաստաթղթերի պատճենների հիման վրա (եթե պահանջվող փաստաթղթերը ներկայացվում են տվյալ եռամսյակի վերջին ամսվա 25-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), ոչ ավելի, քան Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի №2215-Ն որոշման Հավելված 5-ի 10-րդ աղյուսակով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափը:

2.4. Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո Նվիրաբերողը Պայմանագրի 1.1 կետում նշված գումարը, Պայմանագրի 2.1 և 2.2 կետերին համապատասխան, փոխանցում է Նվիրաբերություն ստացողի գանձապետական հաշվին, իսկ տեղական գանձապետական բաժանմունքը Նվիրաբերություն ստացողին գումարները հատկացնում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.5. Պայմանագրի 1.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես Պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Նվիրաբերողն իրավունք ունի՝

3.1.1. Նվիրաբերություն ստացողի կողմից սուբվենցիայի գումարի կամ դրա մի մասի ոչ նպատակային օգտագործման փաստն արձանագրելու կամ այդ մասին հավաստի տեղեկատվություն ստանալու դեպքում՝

ա) տեղեկացնելով Նվիրաբերություն ստացողին, դադարեցնել սուբվենցիայի միջոցների հետագա հատկացումը՝ մինչև Նվիրաբերություն ստացողի կողմից համապատասխան պարզաբանումներ կամ բացատրություններ ներկայացնելը,

բ) ոչ նպատակային օգտագործված գումարը հետ գանձել Նվիրաբերություն ստացողից կամ նրա համաձայնությամբ հաշվանցել որպես կանխավճար՝ հաշվետու տարում Պայմանագրի շրջանակներում կատարվելիք աշխատանքների դիմաց,

3.1.2. Նվիրաբերություն ստացողի կողմից սուբվենցիայի գումարի կամ դրա մի մասի ոչ նպատակային օգտագործման փաստը հիմնավոր չճանաչելու դեպքում, առանց սուբվենցիայի գծով չվճարված գումարները վճարելու, միակողմանի լուծել Պայմանագիրը:

3.2. Նվիրաբերողը պարտավոր է՝

3.2.1. Սուբվենցիայի գումարները Նվիրաբերություն ստացողին փոխանցել Պայմանագրի 2.1, 2.2, 2.3 և 2.4 կետերին համապատասխան,

3.2.2. Մասնագիտական խորհրդատվություն տրամադրել Նվիրաբերություն ստացողին բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների (աշխատանքների) իրականացման վերաբերյալ:

3.3. Նվիրաբերություն ստացողն իրավունք ունի՝

3.3.1. Սուբվենցիայի գումարները Նվիրաբերողից ստանալ Պայմանագրի 2.1, 2.2, 2.3 և 2.4 կետերին համապատասխան,

3.3.2. Մասնագիտական խորհրդատվություն ստանալ Նվիրաբերողից բնապահպանական ծրագրով նախատեսված աշխատանքների (միջոցառումների) իրականացման վերաբերյալ,

3.3.3. Սուբվենցիայի գումարները Պայմանագրի 2.1, 2.2, 2.3 և 2.4 կետերին համապատասխան չփոխանցելու դեպքում, միակողմանի լուծել Պայմանագիրը:

3.4. Նվիրաբերություն ստացողը պարտավոր է՝

3.4.1. Պայմանագրի 1.1 կետում նշված միջոցներն օգտագործել բացառապես Պայմանագրի Հավելվածով նախատեսված ծրագրի իրականացման միջոցառումներին համապատասխան:

3.4.2. Հաշվապահական փաստաթղթերը վարել օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան և ապահովել Պայմանագրի 1.1 կետով նախատեսված նպատակների իրականացման հետ կապված փաստաթղթերին ծանոթանալու Նվիրաբերողի ներկայացուցչի հնարավորությունը,

3.4.3. Ստացված սուբվենցիայի հաշվին ֆինանսավորվող նպատակային ծախսի կատարումից (ենթածրագրի կամ միջոցառման ավարտից) հետո սուբվենցիայի չօգտագործված գումարը եռօրյա ժամկետում փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

3.4.4. Պայմանագրի 1.1 կետում նշված նպատակների իրականացումից հետո 30 օրվա ընթացքում Նվիրաբերողին գրավոր ներկայացնել համայնքի 2021 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված աշխատանքների (միջոցառումների), այդ թվում՝ Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելվածով սահմանված պետության կողմից վերահսկվող չափանիշների կատարման և բնապահպանական ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքների ստացման մասին վերջնական հաշվետվություն:

4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը, բայց ոչ ուշ, քան տվյալ բյուջետային տարվա ավարտը:

5.2. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

5.3. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

5.4. Պայմանագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով:

5.5. Պայմանագիրը կազմված է 3 (երեք) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի Հավելվածը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆՎԻՐԱԲԵՐՈՂ	ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ
Շրջակա միջավայրի նախարարություն	**Ախթալայի համայնքապետարան**
ք.Երևան, Կառավարական տուն 3	ք. Ախթալա
ՖՆ գործառնական վարչություն	ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011017649	ՀՀ 900265122334 կապիտալ
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 06601176
Շրջակա միջավայրի նախարարության	Ախթալա համայնքի
գլխավոր քարտուղար	ղեկավար
Գ.Գույան	***Ա.Թամազյան***
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
«29» «մարտ» 2021թ. կնքված
«ՇՄՆ-ՍՎ-3» ծածկագրով պայմանագրի

ՆՎԻՐԱԲԵՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար
Գ.Գույան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ
Ախթալա համայնքի
ղեկավար
Ա.Թամազյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Հ/Հ	Նախատեսված միջոցառումների անվանումը	Ծրագրի կատարման համար բյուջետային հատկացումների ծրագրի գումարը (հազար դրամ)	Ծրագրի իրականացման		Ծախսի տեսակը	Համայնքի 2021 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված աշխատանքների (միջոցառումների) գծով պետության կողմից վերահսկվող չափանիշները և ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները
			սկիզբը	ավարտը		
	«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքի համաձայն հաստատված Ախթալա համայնքի 2021 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումներ ընդամենը, *այդ թվում*	**3848600.0**			**կապիտալ**	
1.	**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ**					
1.1.	Շամլուղ բնակավայրի զբոսայգում LED լուսավորության անցկացում	2909.1	08.01.2021թ.	20.12.2021թ.	կապիտալ	LED լուսավորության կառուցված համակարգ՝ համաձայն նախագծի
1.2.	Շամլուղ բնակավայրի զբոսայգու կանաչապատ տարածքի ընդլայնում	440.0	08.01.2021թ.	20.12.2021թ.	կապիտալ	Ընդլայնված կանաչապատ տարածք՝ համաձայն ծրագրի
1.3.	Շամլուղ բնակավայրի զբոսայգու վերակառուցման և բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթեր	499.5	08.01.2021թ.	20.12.2021թ.	կապիտալ	Կատարված նախագծա-նախահաշվային աշխատանքներ

ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԼՄ – 22/12

ք. Վանաձոր

02 մարտի 2022թ.

ՀՀ Լոռու մարզպետարանը, ի դեմս գլխավոր քարտուղար Կ.Աշրաֆյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Գլխավոր կարգադրիչ, մի կողմից, և Ախթալայի համայնքապետարանը, ի դեմս համայնքապետ Ա.Թամազյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Ստացող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Գլխավոր կարգադրիչը հատկացնում է, իսկ Ստացողը ստանում է ՀՀ 2022 թվականի պետական բյուջեով նախատեսված բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին» հոդվածով) «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, ՀՀ Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի և Սյունիքի մարզպետարաններին գումար հատկացնելու մասին» 03.02.2022թ. թիվ 226-Ն որոշման հավելված 1-ով սահմանված Ախթալա համայնքի Շամլուղ բնակավայրի զբոսայգու վերանորոգում ծրագրի նպատակային հատկացումը (այսուհետև սուբվենցիա)՝ 7 660 400 (յոթ միլիոն վեց հարյուր վաթսուն հազար չորս հարյուր) ՀՀ դրամ ընդհանուր գումարով՝ հետևյալ համամասնություններին համապատասխան:

Հ/Հ	Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին	Հատկացվող գումարն ըստ եռամսյակների(աճողական)՝ հազ. ՀՀ դրամ, որից՝			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
1.	Ախթալա համայնքի Շամլուղ բնակավայրի զբոսայգու վերանորոգում	7,660.4	7,660.4	7,660.4	7,660.4
	Ընդամենը	7,660.4	7,660.4	7,660.4	7,660.4

1.2 Սույն պայամանագրի 1.1 կետում նշված ֆինանսական միջոցները Հայաստանի Հանրապետության համայնքներին տրամադրվում են հիմք ընդունելով տվյալ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման նպատակով համայնքի և ընտրված մասնակցի հետ կնքված գնման պայմանագրի շրջանակում մարզպետարան ներկայացված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ծախսը հիմնավորող փաստաթղթերը: Ընդ որում ձեռքբերված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների դիմաց Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքին վճարումը իրականացվում է ծախսը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա, պայմանագրով սահմանված գումարի (19151,03 հազ. դրամ, այն տոկոսային հարաբերակցությամբ, ինչ տոկոսային հարաբերակցությամբ, որ նշված է սուբվենցիայի պայմանագրում (40.0%):

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գլխավոր կարգադրիչը իրավունք ունի՝

2.1.1 Իրականացնել վերահսկողություն սուբվենցիայի գումարի նպատակային օգտագործման նկատմամբ:

2.1.2 Սուբվենցիայի գումարի կամ դրա մի մասի ոչ նպատակային օգտագործման դեպքում համայնքի միջոցներից հետ գանձել ոչ նպատակային օգտագործված գումարը և դադարեցնել սուբվենցիայի հետագա հատկացումը:

2.1.3 Պահանջել Ստացողից՝ ստացված սուբվենցիայի հաշվին ֆինանսավորվող նպատակային ծախսատեսակի կատարումից (ծրագրի ավարտից) հետո եռօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերադարձնել սուբվենցիայի չօգտագործված գումարը:

2.2 Գլխավոր կարգադրիչը պարտավոր է՝

2.2.1 Ստացողին հատկացնել սուբվենցիայի գումարը՝ փորձագիտական եզրակացություն անցած նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված և գնումների գործընթացի արդյունքում կնքված պայմանագրի գնին համապատասխան:
2.3 Ստացողն իրավունք ունի՝
2.3.1 Ստանալ Գլխավոր կարգադրիչի կողմից հատկացվող սուբվենցիայի գումարը:
2.4 Ստացողը պարտավոր է՝
2.4.1 Սուբվենցիայի գումարը օգտագործել նպատակային՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքով՝ Գլխավոր կարգադրիչին ներկայացնելով տեղեկատվություն գնումների գործնթացի և գումարի ծախսման վերաբերյալ (ներկայացվում են գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի և կատարողական ակտերի պատճեները):
2.4.2 Ստացված սուբվենցիայի հաշվին ֆինանսավորվող նպատակային ծախսատեսակի կատարումից (ծրագրի ավարտից) հետո եռօրյա ժամկետում սուբվենցիայի չօգտագործված գումարը վերադարձնել ՀՀ պետական բյուջե:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Ստացողը պատասխանատվություն է կրում սուբվենցիայի գումարների նպատակային օգտագործման համար:
3.2 Գլխավոր կարգադրիչը պատասխանատվություն է կրում ըստ Ստացողի կողմից ներկայացված կատարողական ակտերի սուբվենցիայի գումարների համամասնական հատկացման համար:

4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

4.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2022թ. դեկտեմբերի 25-ը:
5.2 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
5.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կառավարության որոշումների հիման վրա, կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:
5.4 Սույն պայմանագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբան[illegible]ն ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼԽԱՎՈՐ ԿԱՐԳԱԴՐԻՉ	ՍՏԱՑՈՂ
ՀՀ Լոռու մարզպետարան	Ախթալայի համայնքապետարան
ք. Վանաձոր, Հայքի հրապարակ	ք.Ախթալա,
ՀՎՀՀ 06930769	ՀՎՀՀ 06954171
Հ/Հ 900231002537	Հ/Հ 900265122334
ՀՀ ՖՆ գանձապետ. համակարգ	ՀՀ ՖՆ գանձապետ. համակարգ
_____ Կ.Աշրաֆյան	_____ Ա.Թամազյան
Կ. Տ.	Կ. Տ.